Project funded by the EUROPEAN UNION

ԼՐԱՏՈՒ № 2

Փետրվար, 28

“Սևծովյան ավազանի երկրների 2007-2013 թվականների համատեղ գործողությունների ծրագրի շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից համակարգվող “Տեղական/տարածաշրջանային տնտեսական զարգացման ցանցը՝ որպես որոշիչ գործոն Սևծովյան տարածաշրջանում մրցակցության խթանման համար” ***(Black Sea LRED-Net)*** ծրագրի ղեկավարող մարմին է ներկայացվել առաջին ընթացիկ քառամսյա հաշվետվությունը:

Ծրագրի շրջանակում ստեղծվել է ծրագրի կայքը՝ http://www.lred-net.org/, որտեղ տեղադրված են ծրագրի իրականացման ընթացքի, նախատեսված ու տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ և այլ տեղեկություններ՝ տարանջատված ըստ ընդհանուր ծրագրային և առանձին գործընկերների մակարդակների:

Կայքում յուրաքանչյուր գործընկեր ունի իր էջը, որտեղ ներկայացված են նրանց իրականացրած աշխատանքները, կազմակերպված միջոցառումները կոնտակտային տվյալները և այլն:

Գեղարքունիքի առևտրաարդյունաբերական պալատը մշակել և անգլերեն թարգմանվել է ՛՛Մրցակցային առավելությունների մասնակցային գնահատում՛՛ (PACA) ձեռնարկ-ուղեցույցը: Այն թարգմանվել է ծրագրի գործընկեր երկրների լեզուներով և տարածվել նպատակային խմբերի միջև: Այդ ուղեցույցի օգնությամբ յուրաքանչյուր գործընկերոջ երկրում կիրականացվի երեքական PACA գործընթաց, որի միջոցով կբացահայտվեն տեղական/տարածաշրջանային տնտեսական զարգացման այն հնարավորությունները, որոնց օգտագործումը թույլ կտա արձանագրել տնտեսական առաջընթաց և բարձրացնել այդ տարածքների բնակչության կենսամակարդակը:

Ընդհանուր առմամբ, PACA վարժություններ կիրականացվեն 5 երկի 15 պիլոտային տարածաշրջանում:

Ինչպեսև նախատեսվում էր, 2014թ-ի փետրվարի 26-27-ին Մոլդովայի մայրաքաղաք Քիշնևում կայացավ ծրագրի համակարգողների երկօրյա հանդիպումը, որի ընթացքում համակարգողները ներկայացրեցին իրենց կազմակերպության կատարած աշխատանքը, հանդիպած խոչընդոտները, քաղած դասերը և կիսեցին իրենց փորձը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև ծրագրի բյուջեի, գնումների հետ կապված և այլ ընթացիկ հարցեր, հստակեցվել են առաջիկա միջոցառումների ժամկետներն ու տրվել կոնկրետ հանձնարարականներ: